



**ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎԵՀԱՓԱՌ
ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ**

Մոտ 1500 տարի է, ինչ Հայաստանյաց Առաքելական Եկեղեցին և համայն հայ ժողովուրդը հիշատակում է Վարդանանց հերոսամարտը որպես հայ ոգու հաղթանակի տոն: Թե՛ Մայր հայրենիքում, թե՛ Սփյուռքի տարածքի վրա, Վարդանանց հերոսամարտը հշվում է մեծ հանդիսությամբ՝ պարագելու և հաղթելու նոր հավատ, նոր լիքը հաղորդելով մեր ժողովրդին:

Այս տարի ևս, փետրվարի 22-ին, մեծ շուրջով ու հանդիսությամբ հշվեց Վարդանանց հերոսամարտի տոնը Մայր Աթոռում: Վարդանանց հերոսամարտի հիշատակման օրը, այս տարի ևս, հշվեց նաև Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգենի Սուածինի անվանակոչության տարեդարձը:

Սուավույան ժամը 11-ին Մայր տաճարում մկնեց և պատարագը՝ ներկայությամբ Վեհափառ Հայրապետի: Պատարագին էր նոգենոր նենարանի տեսուց գերաշնորհ Տ. Անահիա ևսու. Արքաջանքը: Հավարտ պատարագի կատարվեց Հայրապետական Մայթանք, իսկ Խշման սեղանից ոգեշունչ քարոզ խոսեց պատարագի սրբազն հայրը.

**Տ. ԱՆԱՀԻԱ ՍՐԲԱՋԱՆԻ ՔԱՐՈՉԸ
ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻՆ**

«Յանուն Հօր և Որդոյ և Հոգուն Սրբոյ, ամէն»:

«Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն»:

«Զգիտակցված մահը մահ է, գիտակցրված մահը՝ անմահություն»:

Սիրելի հայատացյալ եղբայրներ և քոյրեր, այսօր Ս. Էջմիածնի պատաճառում հավաքվել ենք տոնելու անմահ հիշատակ Վարդանանց պատերազմի այն անմեղ զոհերի, որոնք հանուն հայրենիքի և հանուն Հիսուսի տվեցին իրենց կյանքը 451 թվականին: Ինչպես շարական է ասում, «ի մեծի պատերազմին», այսինքն մեծ պատերազմի ժամանակ: Ինչո՞ւ է շարականագիրը ասում «ի մեծի պատերազմին», արդյոք հայ ազգի պատմության մեջ չե՞ն եղել ավելի մեծ պատերազմներ: Հիշենք թեկուզ Արտաշես Ս.-ի մղած պատերազմը 180 թ. մ.թ.ա. Մագնեզիայում՝ ընդդեմ հոռմացիների, երբ Հայաստանը առաջին անգամ ձեռք բերեց իր անկախությունը և դարձավ պետություն: Հիշենք Տիգրան Մեծի մղած մեծ պատերազմները, Արտավազի և մյուս հայոց թագավորների: Ինչո՞ւ համար է Ավարայրի ճակատամարտը կոչում մեծ: Այն, սիրելի ժողովուրդ, նախ և առաջ մարմնավոր պատերազմ չեր, ինչպես գրում է նոյն շարականագիրը, այլ նոգենոր պատերազմ: Այսինքն, մեր ժողովուրդը մղում էր այս պատերազմը, ոչ թե իր մարմնի ազատության, անկախության համար, այլ նաև իր հոգու պատմության: Հոգի անեղով նկատի ունենք հայատքը և կրոնը: Այս իմաստով

451 թ. պատերազմը հայոց պատմության պայման է չերից մեկն է: Այս հայ ազգի ոգագանգության արքացման, արա քրիստոնական գիտացության բարձրացման և օտարքի ստրուկ շինուալու համար միշտ արդար մի պատրազմ էր: Ես չեմ ոգում տարանանորեն կանգ առնել այդ պատրազմի նկարագրության վրա, որոք բոլոր գիտեք այդ քաջորեն: Բայց կողքնայի մի բոված կանգ առնել պար բարոյական արժեքի վրա: Միայն մի խոսք, և ձեզ ուամար պարզ կլնի, թե ինչ մեծ հշանակություն ունեցավ այդ պատերազմի: Ես ոգում եմ այն տեսանկությունը դիտել, ինչ տեսանկութեավ նայում էր այդ պատերազմի վախճանի պարսից զրավարը՝ Մուշկան Նյուսապավորությունը: Եղիշեն ասում է, որ ան երբ կորիս ավարտվեց, մի բոված ստածունքի մեջ ընկալ և նայեց դիմակնարով լոյս դաշտին ո խորհեց, թե ի՞նչ շահեց ան արդյոք և ի՞նչ կորցրեց: Ծիշու է, Փիգիկական հայոթանակը թվում էր, թե նրա կողմն էր, բայց բարոյապես պարսից զրավարը ընկալված էր և ինչ-որ հեռավոր տագնապներ էր գգում իր բանակի և իր պետության համար: Այդ մտածմունքը նրան շնարեց: Նվարսակի դաշնագիրը, հայերի երեսուն տարվա մղած կովի արդյունքը, կնքվեց և հայերը տարան իրենց բարոյական ամուր հայոթանակը, ապացուցելով, որ Նյուսապավորություն իր կասկածների մեջ ճիշտ էր: 451 թ. պատերազմից հետո հայ ազգը ձեռք բերեց փոքրով մեծին դիմավորելու մի անզգակի, անհանապակի, բայց աստվածային զգացմունք: Զեռք բերեց մի հավատ, որ կարելի է հան պայքարել ու մեռնել, սակայն ժողովրդին առաջնորդել դեպի հայոթանակ:

Ասում են, Հայաստանում շատ լեռներ կան, շատ ժայռեր կան: Եթե մտուին պատկերացնենք հայ ազգի պատմությունը, պիտի տեսնենք, որ այդ լեռները այս հայոց քաշերն են, որոնք շարունակեցին Վարդան Մամիկոնյանի գործը, պիտի տեսնենք, որ դա Վահան Մամիկոնյանն է, պիտի տեսնենք, որ դա Սմբատ Ա. հայոց քագակորն է, որ Վերականգնեց արաբների կողմից, կործանված հայոց քագակորությունը, պիտի տեսնենք, որ դա քաջ Աշոտ Երկաթն է և Գևորգ Մարզպետունին, որոնք կարողացան հրաշքով հայոթանակներ կորցել հզոր բանակից և ապացուցել, որ պահումնեանայնիվ մի ծաղկով է գարուն գալիս, պիտի տեսնենք, որ այդ լեռներից է հան մեր պանծայի Դավիթ Բենկը, և վերջիվերջո, ինչու չէ, հան այդ լեռներից է մեր քաջ Անդրամիկը,

որը եղավ հայ ազգի մեծագույն պաշտպանման մեջ:

Այսոր, հայ ազգի այս պանծայի զորավարների, թագավորների կողքին կան այս պահանջման բազերականներ, քաջարի զինվորները Քրիստով, որ կողք-կողքի, զենքը ձեռքին, պաշարեցին հայ ազգի պատության և անկախության համար, միշտ այդ նույն՝ 451 թվականից, երբ Ալենի ծրացը զոհնեց իր կարմիր և, ինչպես ասվում է վարդագույն արյունը՝ հանուն Հայ Եկեղեցու անկախության, հանուն Հայ Եկեղեցու կանգնենան ընդդեմ որիշ կրոնների: Արդարիս եղան հայոց շատ կարողինուններ և հայ հոգևորականները: Նրանք բունեցին այդ նոյն շատավինը՝ զուտ իրենց անձը, ամեն ինչ, հանուն Հայ Եկեղեցու անկախության և հայ ժողովորի պատության: Այսօր մենք այդ պանծայի մասնաներից կարող ենք հիշատակել Մեծն Ներսես Աշոտարակեցուն, որ 1828 թ. գենքը ձեռքին պարում էր ընդդեմ պարակի բռնակալների՝ Սրբելյան Հայաստանի պատության և անկախության համար: Այսօր մենք կարող ենք այդ պանծայի մարդկանց կողքին հիշել Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսին և Գարեգին Հովհանիսի արքապիսկոպոսին, որոնք Սարդարապատի ճակատամարտում հայ ժողովորին առաջնորդելով տարան դեպի մեծ հայոթանակ և ցուց տվեցին, որ թվական գերակշռությունը դեռևս ոչինչ չի հշանակում հոգու ուժի դեմ:

Այսօր, սիրելի ժողովորդ, մեզ համար և՛ որպան օր է, և՛ տփուր: Հայ ժողովուրդը ապրում է դժվարին ժամանակներ: Մեր Հայ Եկեղեցին կիսում է այդ դժվարին ժամանակները:

Վեհափառ Հայը, այսօր Զեր անվանակոչության օրն է: Զեր այս 35 տարիների հառավարման ընթացքում, որպես Հայոց Հայապետ, մեր Եկեղեցին, կարելի է ասել, խղճուկ միշտակից բարձրացավ մի անպիսի ռարձնությին, որ համաշխարհային համակություն և ճանաչում ստացավ: Այս 35 տարիների ընթացքում Զեր տաղանդի և մեծ հեղինակության շնորհիվ Դուռ կառողացար բոլոր ազգերին ծանոթացնել Հայ Եկեղեցուն, ներկայացնել այն որպես մի հնագույն, մի ազգակեր Եկեղեցի: Դուք կարդանում եք հան մեծ լավատեսություն Ընունչի մարդկան:

Ես հիշում եմ Զեր այցելությունը Լեռինակ և Սպիտակ, երբ տասնյան հասարակու հայացքներ և աչքեր ուղղված են դեմքի Զեր, և մրանց այդ հայացքների և աչքերի մեջ հարցական նշան կար: Ի-

րեմ համար էր այդ հարցականը. տոկա՞լ, թե ընկճվել: Եվ Դուք կարողացաք այնպիսի մի մթնոլորտ ստեղծել, որ այդ աշքերը և հայացքները ենթարկվեցին Զեր լավատեսությանը, իրական լավատեսությանը և հավատացին, որ հայ ազգը պետք է տոկա և պետք է պաքարի և երբեք չպետք է ըմեկի:

Սայօթ Զեր անվանակոչության տոնը համընկել է Ս. Վարդանի տոնին: Եթե ես մի համեմատությամբ պիտի ասեի, որ Վարդան Մամիկոնյանը հայ զենքի ասպետն է և հայ պատվի ասպետը, ապա Զեր, Վեհափառ Տեր, պիտի համեմատեի նրա հետ, ասելով, որ Դուք հայ հոգու բարձրացնողն եք և հայ երազաքնների այն մաքուր անորոշ, որ կրում է այդ երազաքնները: Ես պիտի այս սուրբ օրը մաղթի Զեր երկար տարիների կյանք հանուն Մայր Աթոռի միաբանության և հանուն հոգևոր հեմարանի, արևշատ օրեր, կապույտ երկինք և խաղաղ ու խաղաղ տարիներ: Պիտի հժվար լինի Զեր գործը, Վեհափառ Տեր, բայց ցանկանում եմ, որպեսզի Դուք Զեր լավատեսությամբ ոգևորեք ոչ միայն մեր ծողովորին, այլ նաև մեզ, որպեսզի մենք, գալով Զեր ետևից, կաղողանանք բարձրացնել մեր հայ ազգի ոգին: Ցանկանում եմ Զեր, Վեհափառ Տեր, կրկին ու կրկին երկար ու երկար տարիներ և թող այդ տարիները ծառայեն մեր հայ ազգի համար ու տանեն նրան դեպի փրկություն: Ամեն:

Նույն օրը, ժամը 18-ին, Վեհարանի հանդիսությունների դահիճնում տեղի ունեցավ Ավարայրի հերոսների հիշատակի ոգեկոչմանը նվիրված հանդիսություն:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, Սրբատյան, Սյունյաց և Շիրակի թեմերի առաջնորդ սրբազն հայրերը, հոգևորականներ, Մայրավանքի պատուելույնն ու աշխատավորները, հոգևոր հեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը, հայրենի մտավորականության ներկայացուցիչներ, հավատացյալներ և այլ հյուրեր:

Հանդիսությանը ներկա էին ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ այն. Ս. Վարդանյանն ու տեղակալ Ռ. Զարգարյանը:

Հանդիսությունն սկսեց Վեհափառ Հայրապետի արտասանած «Հայր մեր»-ով: Այնուհետև հնչեց ՀԽՍՀ պետական հիմքը:

Հանդիսության բացման խորով հանդես

եկավ հոգևոր հեմարանի դսատիարակ Տ. Նաբան վրդ. Հովհաննեսյանը.

Մանր է եղել մեր ազգի՝ հայոց ճակատագիրը: Երկիրը մեր անընդիմատ ունատակ է արվել բիրտ ու վայրագ նվաճող Աերի կողմից: Վերջ չեն ունեցել ավարի ու կողովուտի, ծողովորի գերեվարման ու բնաշնչման համար ծավալված արյունահեղ պատերազմները: Սակայն հայր ամենաարհանական պահին երբեք չի խնայել իր կյանքը հայրենիքի ու խղճի ազատության համար, առյնին այն դեպքում, երբ համազակ է եղել, որ ելքը սեփական անձի զոհաբերումն է:

Հայ ծողովորի կյանքում այդպիսի ճակատագրական պահ էր նաև Վարդանանը, որը վճռորչ դեր ունեցավ ազգին հետագա գոյության համար: Այն եղավ Ավետարանական առաջի ցորենի այն հատիկը, որն «յերկիր անկեազ մեռա» և մինչև օրս էլ իր բազում արյունքներն է տալիս:

Հայոց մեծ պատերազմի՝ Ավարայրի հերոսական շտենչն ու ոգին հայ ծողովորի համար եղել է և է ազատության ու հայրենասիրության չղգունող և հավետ կենդանի խորհրդանշան, ոգևորության անընդաւագությունը աղբյուր և բարձրագույն օրինակ:

Եվ պատահական չէ, որ ճիշտ երկու տարի առաջ, փետրվարյան այն օրերին, Սր. Վարդանանց քաջերի հիշատակի ոգեկոչությունը մի քանի օր անց էր, որ կարծես թե հայ հոգում հարություն առավ հայունանկեր հահատակաց ոգին և ողջ հայ ծողովորդը, թե՛ ի Ղարաբաղ, թե՛ ի Հայաստան և թե՛ ի Սփյուռս աշխարհի, դարձավ մեկ հոգի ու մարմին, ձեռք-ձնորի տված մեկ բունցը, մեկ բանակ, անարդարության դեմ ճակատ տալու համար՝ վասն ազգային հներնության և վասն հավատություն այս հժվարին պահին էլ մեզ միշտ առաջնորդում է տակավին Ավարայրի դաշտում վատիված անմար ջանի լույսը:

Այսօր Հայաստանյաց Սուբեկան եկեղեցին առավել մեծ ոգևորությամբ է տունում իր ազգային մեծագույն տոներից մեկը՝ Արքոց Վարդանանց սրբազն տոնը: Բազմերախտ հայ ծողովորդը ազգային հապարտության անխատն զգացումով հարգանքի և պաշտամունքի տուրք է մատուցում Ավարայրի դաշտում ընկած երանելի հահատակների խնկելի հիշատակին, որոնք «վարդագոյն արեամբ իրեանց պատկեցին զեկեղեցի»:

Այսօր հայոց զավակները որդիական ակնածանոք գալիս են նաև առ հայրն ի-

րենց հոգերը՝ Զերդ Վեհափառության շնորհավորելու անվանակոչության առջիկ, աղոթքով ու միոր չերմ զգացմումըներով մարդերը՝ Զերդ Սրբությամբ քաջառողջություն և արևատություն, ու նաև, գալիս են նորդելու ովտան իրենց հայրերի՝ մնացու հարազար և ամրավաճան Հայոց հայրենիքին ու Սուրբ Եջմիածնին, «զի յայս հաւատոյ զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ նորշտակը և ոչ մարդիկ, ոչ սուր և ոչ հոլը...»:

Այսուհետև օրվա խորհրդի շուրջ բովանդակացից բանախությամբ հանդեն եկալ հոգերը ճեմարանի դասախոս պրև. Խորեն Պալյամը.

ՊՐԵ. ԽՈՐԵՆ ՊԱԼՅԱՄԻ ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

«Ահա ոչ ըստ կամաց արտօսրակիր ողբովք ճառագրենք զբազում հարուածն՝ յորում պատահեցաք և մեք իսկ ականատես լիներով»:

Այսպես է սկսում իր չքանդ պատմությունը Սվաբարյի բրուլը՝ ուսկեղենիկ Եղիշեն: Նա իր «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկր սկսում է այնունից, որտեղ վերջանում է Խորենացու պատմությունը: Այն ընդգրկում է շուրջ 35 տարիների մի ժամանակահատված, այն է՝ 428—465 թվականները:

Եղիշենի պատմությունը բաղկացած է 7 եղանակներից, վերջում ավելացրել է նաև մի ուժերորդ եղանակ: Հիշյալ եղանակների հաջորդականությամբ, պատմիչը շարադրում է պատերազմի բուն շարժադիրները և ապա անցնում պատերազմի նկարագրությանը:

Վերջացել էր Արշակունյաց թագավորությունը, դրանից շուրջ 10 տարի հետո այս աշխարհից հեռացել էին նաև մեր դպրության զուգ ամորմերը՝ Ս. Սահման ու Ս. Մեսրոպը: Որբացած Հայաստանը թնդել էր Պարսկաստանի ծիծ տակ: Սասանյան Արտաշիրն ու նրա հաջորդները բռնի միջոցներով պարտադրում էին բոլոր հայատակ ազգերին ընդունել զրադաշտը՝ նախատես ունենալով կրոնի միջոցով ստեղծել միաձնում մի պետություն:

Հայաստանի նկատմամբ Սասանյան Պարսկաստանի որդեգրած բնությունը մի նոր աստիճանի հասավ Հազկերտ 2-րդի տարիներին: Կրկնապատկեցին հարկեր, հարկի տակ դրվեց Եկեղեցին ու հոգերորդաք, վերացվեց Հայոց հազարապետությունը՝ հրան փոխարինեց մի պարսիկ, իսկ դատավորությունը անցավ մոգանտին: Այս ամենի նպատակը ճիշտ է ըմբռնել Եղիշեն:

«Եւ զայս ամենայն առեմք, զի թերևս ըգմարանոցինն քակտեցէ, և զուխա Եկեղեցու ցողուցէ, և զշինականն վատենացէ, և առ լոյժ արքատութեանն՝ ականա դիմացնեն յօրենս մոգոց»:

Եվ ի վերա այս ամենայնի, շուտով ստացվում է նաև Միհրներսենի հրովարտակը՝ հայերի հայտափախության մասին: Հայերը պատավոր էին գրավոր կերպով պատափանել այդ հրովարտակին կետ առ կետ:

Ուստի. «Միահամուռ ժողովեալք ի թագաւորանիստ քաղաքն Սրտաշատու հայանոցեամբ աշխարհին...» շարադրում են վերոհիշապ թղթի պատափանը: Ահա պատափանի վերջին սողերը:

«Յայս հայտոյ զմեզ ոչ ոք կարէ խախտել, ոչ սուր, և ոչ հոլ, ոչ ջոր, ոչ ամենայն զինչ և են դառն հայածանք, ի քեն տանջանք և ի մէնջ լանձնառութիւնք, սոր քո և պարանց մեր: Շեմք ինձ լաւ մեր քան զարաշինարքն, որ յայր վկայութեան վերայ եղին զինչս և զոտացուածն և զմարմինն իրենանց»:

Համակի պատափանն ընթերցվում է ի լոր հավաքված ժողովրդի և մեծ հավանության արժանանում: Բոլորը երդվում են հաստատուն մնալ այդ վկայության վրա կանքով ու մահվամբ: Երբ այս պատափանը հասենում է Պարսկական արքութիւնն, նաև նախարարներից շատերը Վամիկենյանի զիմափորությամբ խարենոյամբ կանչվում են Տիգրոն, բանտարկվում և սաստիկ սպանեալիքների ու Շեղության պայմաններում ստիպված սուրեն ուրանուու քրիստոնեությունը, որպեսզի կարդանան ողջամբ Հայաստան վերադառնա:

Հազերտի հրամանով հրանք բազմաթիվ մոգերի ու մոգակտեների և պարսկական սուվար բանակի հետ վերադառնում են հայրենիք, այսուեղ տարածելու մոգական կրոնը:

Հայ նախարարների ուրացության մնարը հասել էր Հայաստան, և ոտքի էր կանգնել ողջ ժողովուրդը: Սակայն շուտով հրանք տեղեկանում են, որ նախարարները առերևս են ուրացել իրենց կրոնը:

Բագրևանդում, Անգեղակոյ գյուղի մոտ հավաքված բազմությունը անսպասելի հարձակվում է պարսիկների վրա, բազմաթիվ մոգերի ու զինվորների կոտորում, իսկ մեացածներին հայածական քշում դեպի պարսկական սահմանը: Այնուհետև Հայոց զորքը, ոգերված այս հայտանակությունը՝ հրան փոխարինեց մի պարսիկ, իսկ դատավորությունը անցավ մոգանտին: Այս ամենի նպատակը ճիշտ է ըմբռնել կոտորում պարսիկ զորքերի վրա, որոնք ամրացել էին բերդերում և ամրոցներում, կոտորում

և դուրս վռնդում Հայաստանի սահմաններից և ետ գրավում Արտաշատը, Գառնին, Սնին, Արտագերսը, Աղական և այլ ամբողջներ:

Սակայն այս դժվար պահին պատգամափոք է գախս Հայաստան, ինքը Սովորանից հազարապետը՝ գուծելով, որ պարսկական զորքերը մտել են Սովորանից աշխարհը և սկսել են տարածել զրադաշտական կրոնը:

Վարդան Մամիկոնյանը Հովսեփ կաթողիկոսի հանձնարարությամբ Հայոց զորքը բաժնում է երեք մասի, առաջին մասը հանձնում է Ներշապուին և ուղարկում Արտապատականի այսօրվա քանդված սահմանը հսկելու, երկրորդ մասը հանձնում է Վասակ Սյունեցուն՝ միջնաշխարհը պաշտպանելու համար: Երրորդ գունդը Վարդան ինքը վերցնելով, շտապում է Աղվանը: Այստեղ նա մեծ հայշանակ է տանում. կոտորում և դուրս է վտարում պարսիկներին:

Հոգեբանական ծանր ու բարդ պահերն ու անսպասելի դեպքերը հաջորդում են իրար:

Ծովով գումարն է հանում Վարդանի մոտ, որ Վասակը դավաճանելի է Ս. Ռիստին և ավերածություններ է գործում երկրի կենտրոնում ու երկաստակություն գցում նախարարների մեջ: Վարդանը շտապում է Այրարատ: Վասակն այդ լսելով հեռանում է իր աշխարհը՝ Սյունիք:

Եղիշեն մեծ վարդետությամբ զարգացում է իրադարձությունների ընթացքը՝ համոզերով, որ պատերազմն անհուսափելի էր:

Եվ ահա հայրենասեր և իմաստում սպառապետը, կոպահելով մոտալու վտանգը, 451 թվականի գաղնանը համախմբելով ուխտապահ նախարարական զորքերը, 66-հազարանոց հայկական բանակի գոլոյնը անցած դիմացքավում է պարսկական հարձակումը: Խնչվես վկայում է Եղիշեն, ճակատամարտը տեղի է ունենում Արտագ գալարի Տղմուտ գետի ափին՝ Ավարայր գյուղի Շավարշան կոչչած դիաչում:

Այսօր էլ են կանգուն է Եղեգնաձարի շրջանի Ալայազ գյուղում գտնվող Զորաց վանքը, որտեղ, ըստ ավանդության, ճամատամարտի մեկնելոց առաջ հայ մարտիկները հաղորդվում և երդվում էին:

451 թվականի մայիս 26. Ավարայրի դաշտուն զորաբանակներ դեմ-դիմաց. մեկը՝ նվաճելու, ստրկացնելու ամբարտավան մոլոցքով, մյուսը՝ Աստվածացած մարդկանց արդար ընդունում հանուն արդարության, հանուն ազատության, վասն Հիսուսի և վասն հայրենիաց:

Հնչում է սպարապետի հուզիչ ու գոտեպահող խոսքը՝ ողջված իր քաջ նիզակականերին ու աշխարհազորին:

«Այդ աղաւես զձեզ ով քաջ նիզակականեց իմ...: Մի երկուցեալ զանգինեսցուք ու բազմութեան հեթանոսացն, և մի յահագին սրոյ առն մահկանացուի գթիկուն դարձուցուք:

«Ոի եթէ տացէ տէր յայթութիւն ի ձեռն մար, սատկեսցուք զգօրութիւն նոցա, զի բարձրացի կողմն ճշմարտութեան, և եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկացցուք խընդութեամբ սրտի, բայց միայն յարութիւնն քաջութեան վատութիւն մի խառնեսցուք»:

Ակսում է Հայոց գոյամարտը.

Հայ մարտիկներն ու զորականները իրենց սպարապետի հետ քաջության ու խիզախության բազում գործեր են կատարում:

Եղիշեն ուզմագետի բացառիկ հմտությամբ է նկարագրում ճակատամարտը: Ռազմի նկարագրությունը Եղիշենի պատմության ամենագեղեցիկ հատվածներից է:

«Անդ էր տեսանել շտապ մեծի տագեապին և զայշու անբար տարակուսանացն երկոցունց կողմանցն...»:

«Մանաւանդ յորժամ տեսաներ ոք զրագմակոյն դիականցն անկենց, սիրտն բեկաներ և աղիքն գալարէին՝ լսել զմնչին խոցելոցն, և զմնչին բեկելոցն, զթաւալոյոր խաղալ սրտալ վիրատրացն, զիախուտ վատացն, ցյաքրուտ լթելոցն, զարտափարումն զանարի արանցն, զծին կանացեացն, զողբս սիրելեաց, զաշխարումն մերձաւորաց, զվայ և զաւադ բարեկանցն, քանզի ոչ եթէ կողմ էր որ յաղթեաց և կողմ էր որ պարտեացաւ այլ բազու ընդ բաշ ելեալ երկորին կողմանը ի պարտութիւն մատնեցան»:

Եղիշեն հակիմ, բայց խորը հուզումով է նկարագրում Վարդանի մահկան տեսարանը:

«Իսկ կորովին Վարդան իրովք քաջ նիզակակցուց ոչ սակա նախնիրս ի տեղուցն զործեաց, յորում տեղուց և ինքն իսկ արժանի եղաւ առնուլ զիատարեալ ճակատակութիւնն»:

Ավարայրի դաշտում այդ օրը Վարդանի ժիմակիցներից մարտիրուսացան 1036 մարդ, իսկ պարսկական կողմից սպանվեցին 3544 մարդ, որոնցից 9-ը խիստ պատվավորներից:

Օրը տարածամում էր, դժվարանում էր պատերազմական գործը:

Ընկել էր Հայոց անվետին սպարապետը՝ Ոգին Ավարայրի, և չկար մեկը, որ կարողանար զիսավորել մարտը, ուստի մնա-

ցածները, ըստ Եղիշեի՝ «Ցանուցիր ցրվեցին և քաշվելով երկրի զանազան ամուր վայրերը, ամրանում էին բազում գավառներում և բերդերում»:

Հայկական կողմը հախընտրեց համաձեկ և ավելի կազմակերպված շարունակել ռամածողովրդական դիմադրությունը, արարամ անելու պարսկական բռնակալությունը:

Հայերի այդ պայքարը դարավերջին գրչիալիքը Վարդանի եղբորորդին, Վահան Մամիկոնյանը:

Վահանյան պատերազմը պասկից հայրի փայտու հայտանակով, և պարսկական արքունիքը 485-ին Նվարասակի դաշնագրությամբ հարկադրված եղավ հանաչելու Հայաստանի ինքնուրույն վարչական իրավունքը և քրիստոնեական կրոնի ազատությունը:

Հայրենասեր Մամիկոնյանները Վարդանի սուրբ մարտիրոշի շողոնեցին Ավարայրի դաշտում իբրև ապար պարսկիներին: Նըրանք այն փոխադրեցին Հայաստան և ամփոփեցին Սեպուհ Լեռան բարձունքներում՝ Հայոց Մեծ Լուսավորչի նշանակությունը: Այսպիսով Սեպուհ լեռը, ըստ հայկական մին ավանդության, իր կրծքի մեջ ամփոփում է մեր ժողովրդի երեք վեհագույն մեծությունների՝ Ս. Գրիգոր Լուսավորչի, Տրդատ Գ թագավորի և Վարդան Մամիկոնյանի լուսաշող նշանակությունը:

Եղիշեն անողոք է ժողովրդի և հայրենիքի դավաճանների հանդեպ:

Անմահապահ Վասակ Սյունեցու մասին հայրենասեր պատմիչի հիշատակարան-կտակը՝ ուղղված բոլոր սերունդներին:

«Գրեցաւ իշխատակարանս այս վասն նորա, առ ի կշտամբումն խնդիմանութեան մեղաց նորա, զի ամենայն՝ որ զայ լրուեալ գիտացեց, նզում ի հետո արկցէ, և մի լիցի ցանկացող գործոց նորա»:

Սյուր 15 և ավելի դժմանակ դարեր են գահավեծ անցել-հետուացել Վարդանանց հերոսամարտից, քայլ մեր ժողովուրդը երբեք չի մոտացել ազգադավ գործը Վասակ Սյունեցու ու նրա համախոներին: Սակայն անցած դարերի ընթացքում առավել պայծառացել ու բյուրեղացել է Վարդանի Սուրը անունը և Վարդանանց յորհուրդը:

Հայաստանյաց Առաքելական Ս. Եկեղեցին իր ազգային սրբերի շարքն է դասել Վարդանն ու Վարդանանց մարտիրոսներին, Ալեքոյանց սրբակրոն հոգևորականներին, և 1500 ու ավելի տարիներ տոնահամրում է նրանց հիշխատակը՝ համագային հանդիսավորությամբ:

Անցած 15 դարերի ընթացքում հայ ժո-

ղովուրդը, իր ֆիզիկական գոյությունը պահպանելու ի խնդիր, բազմաթիվ հերոսամարտեր մղեց, որոնք միշտ իմաստավորեցին Ավարայրի խորհրդով: Հայոց պատմությունը հարստացավ հերոսապատմությունը մատյաններով ու դրացանաւում դրվագներով, սակայն ունեցել եղիշեի հայրենաշտելն մատյան մնաց իբրև հայ ժողովրդի հերոսական ու ազատատես մարտունի չգերազանցված ու անզուգական մատյանը: Ազատանգեղությի և խորենացու պատմության սրացչելի երկերի հետ, Եղիշեի այս շքնար մատյանը ունեցավ իր հզոր ազդեցությունը մեր բուժակ պատմագրության վրա: Մեր ժողովուրդը մրացնեց մշտական վերանորոգեց իր ամենական գացցումը՝ հայրենասիրությունունը:

Ավարայրը շարունակվեց մեր պատմության բոլոր ծամանակներում, հասալ մինչև մեր օրերը: Այն առավել հմաստավորվեց Զեթունին, Սաստին, Վահան, Եղիշեին, Մուալենան, Բաշ-Ավարանի ու Սարդարապատի հերոսամարտերում: Մեր ժողովուրդը ծնեց նոր Վարդաններ, Անդրանիկներ, Մուրադներ, Գևորգներ ու Մերաւներ, ծնեց նոր Ալեք Մունի Մուեններ, հայրենասիր ու անձններ ճշմարիտ հովիվներ ու հովիվակներ, որոնք քաջության ու անվենիության նոր էջեր արձանագրեցին մեր պատմության մեջ:

Վարդանանց հերոսամարտի ու Վարդանանց անձնագրության ոգեկոչումը հանդիսացավ նաև Դերենիկ Դեմիրճյանի «Վարդաններ» պատմությունը, որը Հայրենական պատերազմի ամեն օգերին դարձավ հայ մարտիկներին նորանոր սրխանքների մղող կարևոր խթաններից մեկը:

Մեր ժողովուրդը ապրեց ու տոկաց նաև անհատի պաշտամունքի քատնելի ժամանակները, ապրեց լճացման տաղուկալի ու նոգեւազ տարիները:

Վերջապես եկան նոր ժամանակներու, նոր խոսումներով ու ակնկալիքներով:

Մեր ժողովուրդը և մեր Եկեղեցին ի համատու առաջին սրբերից էր, որ զինվորակաց վերակառուցման ու բացախոսության համընդհանուր շարժումներին:

Սակայն, ավանդ, անցնող վերին երկու տարիների ամափոր դեպքերն ու աղետները, մանավանդ աղցախան անյունների հանգույցը և 1988 թվականի դեկտեմբերին անհամապետ ու կործանարար երկրաշարժը, ցնցեց մեր ժողովրդի հոգեկան աշխարհը:

Այս բոլորին գումարվեց Աղրբեշանի տարածքում ապրող հայ ազգաբնակչության

հանդեպ սանձագերծված ու հախապես խնամքով ծրագրված նոր ցեղասպանությունը, կողոպտուն ու բարբարոսական տեղահանությունը: Գայթականության հսկայական մի նոր ալիք և անմարդկային տնտեսական երկարաժամկետ շրջափակում 20-րդ դարի վերջին՝ և նորից անպատճենությամբ ու քար անտարբերությամբ:

Այս անգամ խուժանը ավելի վայրագ գտնվեց, քան միջնադարյան նրա հախահայրերը հանդիսացող սելչուկ-թաթարական հորդաները: Ավերվեցին Սպովիսի, Հին Չուղայի տասնյակ վանքերն ու եկեղեցերը: Կոտրատվեցին բազմաթիվ պղրազան խաչքարեր և այլ արժեքներ:

Սզգին շնորհազարդ և մեծագործ Հայութը՝ Տ. Տ. Վագգեն Ա. Սրբազնագործ Կաթողիկոսը, վշտակիր հոգով, սակայն երբեք չլորցնելով նովկապետի իր գօղնությունը, իր հայրական խնամքով ու հոգածովյամբ, նյութական ու բարոյական մեծությունուն անգամահատելի գործունեություն ծավալեց և ծավալում է և՛ հայրենիքում, և՛ Սիհուոքի տարածքի վրա՝ միմիշարելու և զգաստացնելու իր տագնապահ հոտը:

Այսուղ չենք կարող երախտիքի ու գոհունակության խոսքեր շարտահայտել նաև Մեծի Տանն Կիբեկիոն Տ. Տ. Գարեգին Բ շնորհազարդ Կաթողիկոսի ու Սյոռոհ արքուն միաբաների հասցեին, Սիհուոքի տարածքում նրանց ծավալած ազգանվեր մեծ ջանքերի համար՝ ի նպաստ մեր ծովովով ընդհանուր գործին:

Բուն Բարեկենդանի շարաթն է: Վաղոց մեր ծողովուրդը չեր դիմավորել Բուն Բարեկենդանը նման ծանր ու անորոշ հոգեփառակով: Սակայն այսօր մենք դարձաւ 1540-րդ անգամ մտովին փոխադրվում ենք Ավարայր, որտեղ մեր հոգու աչքերով նորից տեսնում ենք խրոխ ու անվեհեր Հայոց Սպարապետին՝ իր զինակիցներով, հոգեւոր դասով և վաթունվեց հազար հայ մարտիկների սպիտակ բանակով՝ պատրաստ կյանքով պաշտպանելու հայոց սրբազան նոյնը, պաշտպանելու Ս. Թադեոսի, Ս. Բարդուղիմեոսի և Ս. Գրիգոր Լուսավորչի քարոզությամբ արմատափորված Քրիստոսի Ս. Ավետարանի լույսը, պաշտպանելու Աւալապատին տեսչությամբ հրաշակերտված Միամնաւշ Մայր տաճարը, պաշտպանելու Ս. Սահակի ու Ս. Մաշտոցի հանճարով ստեղծված մեր գիրն ու դրաբությունը:

Վարդանանց գաղտնածածու կ անմարտությունը ամեն տարի, ինչպես գարունը, տարմանում ու թարմացնում է մեր հոգի-

ները, լցնում նոր հույսերով, նոր գորությամբ:

Ավարայրը գոհասեղանն է Հայոց աշխարհի: Եւկ Ուլոնքյանք և Վարդանանք ողջակեցներն են մեր ծողովորդի երեկ, աւաշը և Բավիտյան:

Ուստի ձաւանակից լինելով երանելի հիշատակագրին, մենք ևս գոշեմք.

«Մարտեցեք վկաց Քրիստոսի՝ իւաղաղորին մեղելոց՝ և փրկութիւն աշխարհին և աւզիս Հայոց...» ամեն:

Բանախոսությունից հետո հոգնոր մեմարանի սաները, Խորեն Պայանի ղեկավարությամբ, կատարեցին Ընորհալու «Ընորհարց», «Մրեգակն արդարութեան», «Երկնակին հրահրակօք», Եկմալյանի «Լուց», «Բրուն Ավարայրի», Կոմիտասի «Ով Հայկազունք», «Իմ հայրենյաց հոգի Վարդան», Գ. Մրվանձոյանի «Գողյանի քննարք» (մեներգը՝ նախապատրաստական դասարանի ուսանողներ Վիգեն Գողյանի և Լուս Պողոսյանի) և Ծերամի «Իրոն արծիվ» (կատարումը՝ Խորեն Պայանի) ստեղծագործությունները:

Վերջում օրինության խոսքով հանդես եկավ Վեհափառ Հայրապետը.

ՎԵՀԱՓԱՍՈՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Ինչքան նշանակալի է իբրև բացառիկ երևոյն ծողովորդների պատմության մեջ, որ ահա մոտ հազար տարիեւ ի վեր մեր Սուրբ Եկեղեցին ոգեկոչում է և փառաբանում հիշատակը Ավարայրի ճակատամարտի:

Ինչպես գիտեք, այս եկեղեցական տոնը սկսեց հիշատակիվել, և Վարդանն էլ ու իր քաջերը դասվեցին սրբերի շարքում, Կիլիկյան Հայաստանի թագավորության շրջանից: Այն շարականը, որ լսեցիք քիչ առաջ՝ «Նորահրաշ պատառոր»-ը, Սուրբ Ներսէս Ընորհալու ստեղծագործությունն է: Ստոգապես հայտնի չէ, թե դրանից առաջ, այսինքն մինչև 12-րդ դար մոտավորական, այս տոնակամբումը կատարվո՞ւմ էր թե չէ, կամ ինչպես էր կատարվում: Համեմատ դեպս փաստ է, որ նվիրագործ կամ է կիլիկյան թագավորության շրջանից: Այսինքն, մեր պատմության աշնային մեկ քրանին, երբ նայ ծողովորդը իր պետությունը կազմավորեց բուն պատմական Հայաստանի հողամասից դորս՝ մի տեսակ տարագրության մեջ, եթե կարելի է ասել: Ծատ հատկանշական է և կարելի է խորհիլ այս երկու իրողությունների ներքին

կապի մասին: Եվ այս հիշեցնում է ինձ հրեա ժողովորդի պարագան:

Հրեա ժողովորդի ազգային հոգևոր ինքնությունը, գիտակցությունը կազմակորված է ոչ թե բարյակի մեջ, այլ Եգիպտոսի մեջ՝ գերության շրջանին: Եվ առաջին անգամ եղանակութացիների, Եգիպտոսի թագավորի բնունք է, որ հրեա ժողովորդն անվանված է հարայէի ժողովորդ: «Բարյակի ժողովորդ» բանաձևում ատեղծված է գերության շրջանին:

Հայ ժողովորդի կյանքում դարեր-դարեր շարունակ Վարդանանց հիշատակը միշտ վառ է պահպանվել հատկապես մեր Եկեղեցու միջոցով:

Մենք այսօր, գոհարանական մաղթանքի պահին, ձեզի ծանոթ աղոթքը արտասանեցինք. «Օրինացի և պահպանեցի և նախախնամեալ պահեցի զշայապետոթին և զշանապետոթին ազգին Հայոց»: Մյու աղոթքը, այս մալթանքը մենք որիշ առիթներով կ զ օգտագործում ենք Եկեղեցական արարողությունների ընթացքին: Իսաց կարծեք թե ենց Վարդանանց տոնի առիթով առավել նշանակից են դառնում այս երկու գաղափարների զուգակցումը, այսինքն, Հայոց Հայրապետության և Հանրապետության: Որովհետև այս նշանարանով տեղի ունեցավ Ավարայրի ճակատամարտը՝ վասն հավատու և վասն հայրենաց: Ավարայրի ճերոսամարտով վերջնականացվեց անքակտելիությունը, միասնությունը այս երկու գաղափարների հավատքի և հայրենիքի, Հայ Եկեղեցու և հայ պետության: Եվ մեր ամբողջ պատմության ընթացքում, 15 դարեր շարունակ, տիրական, հոգեկան առաջնորդող ուժ հանդիսացած է այս միասնությունը: Ապացուց՝ Եղիշեն պատմիչի հոյակապ գործը: 2եմ կարծում սիսակված լինել, որ որևէ քրիստոնյա ժողովորդի ճակատամարտ այսքան հարազատությամբ չի արտահայտած քրիստոնեական ոգին, իր բովանդակ գաղափարախոսությամբ: Եղիշեն գործը քրիստոնեական գաղափարախոսության գլուխգործոց է, համաշխարհային մակարդակի վրա: Քրիստոնեական գաղափարախոսության ազնվագույն բանաձևումները կան այնտեղ:

Վարդանանց ճերոսամարտի հիշատակը, նրա ոգեկան լուսը տարածվում է մեր ամբողջ պատմության վրա: Վերջին հազար հինգ հարյուր տարիների ընթացքում հայ ժողովորդը անկախ պետություն քիչ անգամ է ունեցել, եթե չհաշվենք կիյիլյան թագավորության շրջանը, որ փառավոր հայկական պետություն է եղած, բայց ամբողջական իմաստով: Սակայն մեր

Եկեղեցին է միայն, որ հայ ժողովորդի ու գեկան ազատությունը և անկախությունը պահպանած է, և դա նաև քաղաքական նշանակություն ունեցած է: Այո՛, Վարդանանց պատերազմի օրերից սկսալ մինչև այսօր հայ ժողովորդը իր հոգեկան ազատությունը և անկախությունը պաշտպանած է քրիստոնեությամբ՝ ընդունմ Պարսկաստանին և, Քաղեղողի բանաձևումները մերժելով՝ ընդունմ բյուզանդիոնին և մյուս Եկեղեցիների, որոնք պատմության ընթացքին քանի քանի անգամներ փորձած են մեր Եկեղեցու անգամներ վրա տիրապետել, տիրելու համար մեր ազգի վրա: Հայ ժողովորդը իր ազգային առողջ բնազդով զգացած է ու հւատապնած, որ գոնք Եկեղեցիով մնա ազատ ու անկախ:

Անվավասիկ, պատմական մեծագույն ծառապություններից մեկը, որ կատարած է մեր Մայր Եկեղեցին: Եվ դա այժմեռոյն ունի նաև այսօր: Եկեղեցական տեսակետից, շատ բարեկամական, եղբարձրական հարաբերությունների մեջ ենք բոլոր մեր քույր Եկեղեցիների հետ՝ և պարագավակ օրորդորսների, և՝ հովաների հետ, և կայուիկ Եկեղեցու հետ, բողոքականների հետ, սակայն մեր տանը մեջ, մեր ազգի ծոցում, մեր ազգային Եկեղեցու հարկի տակ մենք պահպանում ենք նույն պավարայան ոգին: Պահպանում ենք մեր ինքնուրույնությունը, մեր ոգեկան անկախությունը առանց բաժանվելու ընթանելիքից: Այսօր են այս ոգին այժմեական է հնչում մեզ համար, այսօր կ պետք է այն պահպանները սրբությամբ: Մենք նաև այս տեսակետից կարիք ունենք Հայատանեաց Առաքելական Եկեղեցու օգնության՝ պահպանելու համար մեր ազգի ոգեկան անկախությունը:

Ես շատ գոհ մնացի այսօրվա ծրագրից: Ես պետք է շնորհավորեմ մեր հոգևոր ճեմարանի տեսչությունը, դասախոսական կազմը և հատկապես այսօրվա գեղարվեստական բաժինը պատրաստած և ղեկավարող պրես. Խորեն Պալմանը, որ իրեն հատուկ ոգեհնուունը ներկայացրեց շատ հոգի ծրագիրը, որով մենք մի անգամ ևս իրավակ ապրեցինք Վարդանանց հերոսամարտի խորհուրդը:

Թող Աստված միշտ օգնական մնա և պահպան մեր ազգին, մանավանդ այս մեր տագեապալի օրերին, որպեսզի Վարդանանց ոգով կարողանանք հաղթահարել մեր առջև դրված բոլոր դժվարությունները և համեն խաղաղության և արդարության իրականացման ամին՝ մեր ժողովորդի ազատ ինքնորոշման իրավունքով: